ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

20.06.2025թ.

ՈՐՈՇՈՒՄ 514-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԷՐԻԿ ԶԵՅՆԱԼՅԱՆԻՆ ԹԱՆԿԱՐԺԵՔ ՄԵՏԱՂՆԵՐԻՑ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ԻՐԵՐԻ ԱՌՔ ՈՒ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1–ին մասի 24–րդ կետով և 45-րդ հոդվածի 1–ին մասի 7–րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, 12-րդ հոդվածի 1–ին մասի 8–րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 229-Ն որոշումը և անհատ ձեռնարկատեր Էրիկ Զեյնալյանի (ՀՎՀՀ 77983341) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի վաճառքի թույլտվություն ստանալու մասին հայտը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Բավարարել անհատ ձեռնարկատեր Էրիկ Զեյնալյանի կողմից 2025 թվականի համար ներկայացված ՀՀ Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Գ.Աշոտի փողոցի թիվ 24/18 հասցեում գտնվող առևտրի օբյեկտում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առք ու վաճառք իրականացնելու համար թույլտվություն ստանալու հայտը:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ երեք օրվա ընթացքում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն սահմանված տուրքը վճարելուց հետո:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Ա. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ**

2025թ. հունիսի 20

ք. Գորիս